

**ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՐՑԵՐ**

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հոդվածում համառոտ նկարագրվում են «Արդի հայերենի ուսումնական քերականական բառարանի» ձևավորման ու կառուցվածքի հիմնական բաղադրիչները: Բառարանում տրվելու է մոտ 4000 բառի քերականական ամբողջական նկարագրություն: Այն օգտատերերին պետք է ներկայացվի երկու տարբերակով՝ տպագիր և էլեկտրոնային՝ առաջինը՝ որպես բառի՝ տվյալ ժամանակի քերականական նկարագրության ամրագրված պատկեր, երկրորդը՝ որպես լեզվի գործառական կարևորագույն աբյուր միայն իրեն բնորոշ հատկանիշներով՝ ամենահասանելիությունը տարածության և ժամանակի մեջ, պարբերաբար փոփոխություններ կատարելու մեծ հնարավորությունը, ծավալային սահմանափակության չգոյությունը են: Բառարանը ձևակազմական բնույթ ունի. ներկայացնելու է արդի արևելահայերենի բառային միավորի ձևաբանական նկարագրությունը: Բառաձևի շարահյուսական հատկանիշները տրվելու են այն չափով միայն, որչափով առնչվում են ձևակազմությանը: Արձանագրվելու են գրական լեզվի տեղաշարժերը. նշվելու են թեքվող բոլոր այն ձևերը, որոնք գործող զուգաձևեր են: Ավելին, բառարանը ունենալու է նորմավորող նշանակություն՝ մատնանշելով լեզվի զարգացման հնարավոր ուղիները: Բառարանում ներկայացվելու են նաև խոսքիմասային տարաբեքությունը, բառային միավորի հոլովական և խոնարհման հարացույցի տիպար օրինակները, բառերի ռճաբանական արժեքը են: Բառարանում չեն տրվելու գոյականի իմաստային-քերականական խմբերը՝ անձնանիշ/ոչ անձնանիշ, վերացական/թանձրացական, շնչավոր/անշունչ (այս տարբերակումները հայերենում ձևաբանական սկզբունքային արտահայտություն չունեն), որոշիչ հոդերը, հնացած և գործածությունից դուրս եկած կազմությունները, հարադրությունները են:

Ուսումնական քերականական այս բառարանը հիմք կարող է դառնալ արդի հայերենի ընդհանուր քերականական բառարանի կառուցման համար:

Բանալի բառեր - քերականական բառարան, էլեկտրոնային, ձևաբանական, ամբողջական, ուսումնական, նկարագիր, տեղաշարժեր, պոտենցիալ ձևեր, տիպար օրինակ, նորմավորում, տարաբեքություն:

Հայ բառարանագրությունը հարուստ ավանդույթներ ունի: Մեզանում ստեղծվել են բանասիրական տարատեսակ բառարաններ՝ բացատրական, ուղղագրական և ուղղախոսական, ստուգաբանական, դարձվածաբանական են: Իհարկե, ավանդույթը շարունակվելու է՝ բա-

ռարանների այդ տեսակները հարստացնելով նորանոր օրինակներով: Բայց, այնուամենայնիվ, մեր բառարանագրական փորձը աղքատիկ է բառարանների առանձին տեսակների վերաբերմամբ: Խոսքը մասնավորապես գրական լեզվի մշակվածությունը արտահայտող նորմատիվ բառարանների մասին է: Մեզանում խստորեն զգալի է քերականական բառարանի պակասը: Այդպիսի մի բառարան ունենալու կարևորությունից ելնելով՝ ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնը նախաձեռնել է քերականական ուսումնական բառարան ստեղծելու գործը: Թե ինչու է անհրաժեշտ ու ինչ չափով է սպասված այդ բառարանը, առանձին քննարկման առարկա է: Մենք կփորձենք համառոտ ներկայացնել այդ բառարանի ձևավորման ու կառուցվածքի հիմնական բաղադրիչները: Դրանցից առանձնացրել ենք մի քանիսը:

Ի՞նչ «կերպարանք» պիտի ունենա բառարանը՝ **տպագի՞ր, թե՞ էլեկտրոնային**: Հայտնի է, որ մեր օրերում բացատրական և շատ այլ կարգի բառարանների նախընտրելի, իսկ հաճախ պարզապես միակ տարբերակը էլեկտրոնայինն է՝ մի շարք պատճառներով: Օրինակ՝ բառային կազմի անընդհատ և արագ փոփոխությունը շատ ավելի ցանկալի է դարձնում բացատրական բառարանի էլեկտրոնային տեսակի գոյությունը, քանի որ այս դեպքում հնարավորություն է ստեղծվում հաճախակի անդրադառնալու բառարանին, պարբերաբար փոփոխելու և նորացնելու այն: Քերականությունը, մանավանդ ձևաբանությունը լեզվի արագ փոփոխվող բաժիններից չէ: Երբեմն տասնամյակներ է տևում նույնիսկ արդեն գործածության մեջ եղած զուգահեռ ձևի ամրագրումը: Բերենք ընդամենը մեկ օրինակ: 1936-ին ՀԽՍՀ Տերմինաբանական հանրապետական խորհուրդը Գուրգեն Սևակի նախագծով որոշում է **ասել** բայի անցյալ կատարյալի **ասացի, ասացիր, ասաց** անկանոն տարբերակներին զուգահեռ՝ գրական հայերենում գործածական համարել նաև կանոնավոր **ասեցի, ասեցիր, ասեց** ձևերը¹: Անցել է շուրջ հարյուր տարի. մենք դեռ վիճում ենք՝ **ասեցի**-ն համարել գրական տարբերակ, թե՞ ոչ:

Սա նշանակում է, որ քերականական բառարանի գրքային տարբերակը գոյության իրավունք կարող է ունենալ, քանի որ ամրագրում է բառի քերականական նկարագրությունը տևական ժամանակի համար: Բառարանի գրքային տարբերակը կլինի այսօրվա մեր լեզվի ձևաբանության ժամանակագրական պատկերը և կունենա նաև, այսպես կոչված, լեզվապատմագրական արժեք:

Ինչ վերաբերում է բառարանի էլեկտրոնային տարբերակին, ապա դրա անհրաժեշտությունը ևս կա մի շարք կարևոր առումներով կամ հատկանիշներով, որոնք բնորոշ են միայն էլեկտրոնային բառարանին, ինչպես, օրինակ՝ ամենահասանելիությունը տարածության և ժամա-

¹ Տե՛ս Ս. Գյուլբողոսյան, Հայերենի ուղղագրության պատմություն, Եր., 1973, էջ 373:

նակի մեջ, ժամանակ առ ժամանակ փոփոխություններ կատարելու մեծ հնարավորությունը, ծավալային սահմանափակության չգոյությունը նն: Այսպիսով. բառարանը ստեղծվելու է երկու «կերպարանքով» **տպագիր և էլեկտրոնային:**

Բառարանը կոչվում է **քերականական** և ունի ենթավերնագիր՝ «Ձևակազմություն»: Այսինքն՝ **ձևակազմական-ձևաբանական** բառարան է. ներկայացվելու է արդի արևելահայերենի բառային միավորի ձևաբանական նկարագրությունը: Բառաձևի **շարահյուսական հատկանիշները** տրվելու են այն չափով միայն, որչափով առնչվում են ձևակազմությանը, ինչպես, օրինակ՝ խնդրառությունը և կրկնասեռությունը: Բառի **բառական իմաստները** չեն տրվելու բացառությամբ համանունների և խոսքիմասային տարարժեքության դեպքերի: Այսպես:

■ **ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ**

ԲԱՅ

ԳՆԱՀԱՍՏԵԼ, նր, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (գնահատել *աշխատանքը*), **սեռ.-տր.** (գնահատել *մարդուն*), **բաց.** (գնահատել *մաթեմատիկայից*), **գործ.** (գնահատել էլեկտրոնային *համակարգով*), **սեռ.-տր.+միջոցով** (գնահատել էլեկտրոնային *համակարգի միջոցով*), **բաց.+բացի** (գնահատել *բացի Արամից*)

ԿԱՊ

ՀԱՄԱՐ– **իսկ կապ.**, հտդ., խնդրո.՝ **սեռ.-տր.**՝ *հայրենիքի/քեզ համար*

■ **ԿՐԿՆԱՍԵՌՈՒԹՅՈՒՆ**

ԱՊՐԵԼ

• **նր, Ե լծ., պարզ, կանոն., խնդրո.՝ ուղղ.-հայց.**՝ (*Երազ օրեր էր ապրել ծերունի բանաստեղծը*); • **չբ, խնդրո.**՝ (*Թող ապրեն երկար ու երջանիկ*), ենթ. (*Ճապրող*, հմկտ. (*Ճապրելիս*, հրկտ. (*Ճապրած*, անկտ. *ապրում*, վղկտ. *ապրել*, ապկտ. *ապրելու*, ժխտ. *ապրի*)

■ **ՏԱՐԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ**

ԷԼ

1. **ժամ. մկբ.**՝ *Էլ չիտսես:*
2. **սաստկ. վ.**՝ *Միասին էլ կներկայացնենք մեր նախագիծը:*
3. **հնդս. շղկ.**՝ *Այդ կողմերում ամեն քար ու թուփ ձայն ունի, առուն էլ իր երգն ունի:*

4. **անորոշ դեր.,** ածականանիշ՝ *Թե հետո էլ ինչեր եղան, չեմ հիշում:*
ՉՈՒԳԱՀԵՌ

1. **հրբ. ած.**՝ *Քայլում էինք զուգահեռ ճանապարհներով:*
2. **ձևի մկբ.**՝ *Չուգահեռ տարված գծերը չեն հատվում:*
3. **կապ. բ.,** հտդ., խնդրո.՝ **սեռ.-տր.**՝ *Մի խոսիր զրուցակցին զուգահեռ:*
4. **գոյ., ներ, ի, բաց. ից, գործ. ով, ներգ. ում**՝ *Այս պատկերում զուգահեռները հատում են շրջանագիծը:*

■ **ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԵՐ**

ՀԱՆԴԵՐՁ¹ (*միասին, չնայած*), **իսկ. կ.,** հտդ., խնդրո.՝ **գործ.**՝ *Նրանք*

ընտանիքով **հանդերձ** մեկնել են երկրից: Շատ սիրելով **հանդերձ**՝ չէր ուզում ներել:

ՀԱՆԴԵՐՁ² (հագուստ), գոյ., ներ, ի, բաց. ից, գործ. ուլ, ներգ. ում՝ Նոր **հանդերձ** շատ է վայելում քեզ:

Բառարանը ներկայացնելու է բառաձևի **ամբողջական նկարագիրը**: Դա շատ կարևոր է և՛ զուտ գործնական-հաղորդակցական տեսակետից, և՛ տեսական առումով: **Նախ**՝ կարևոր է այն, որ սովորական ընթերցողը ձեռքի տակ ունենա մի բառացանկ, որով կարողանա իր համար ճշտել գրական կանոնական քերականական ձևերը՝ հոլովաձև, հոգնակիի կազմություն, խոնարհման կառույցներ ևն՝ ապահովելու համար իր գրագետ հաղորդակցումը միջավայրի հետ: **Երկրորդ**՝ այսպես կոչված տեսական կարևորությունն այն է, որ բառարանը, լինելով այդպիսին, կունենա նաև զուտ բանասիրական նշանակություն. մասնագետը հնարավորություն կունենա ակադեմիական մակարդակում օգտագործելու քերականական զարգացումների վերաբերյալ բառարանում արձանագրված նյութը:

Հրատարակի վրա եղած հայերեն բառարաններում, իհարկե, այս կամ այն չափով, այս կամ այն հանգամանքով պայմանավորված, տրվում են քերականական ցուցումներ խոսքիմասային պատկանելություն, հոլովական ինչ-ինչ ձևեր, անկանոն խոնարհումներ, դերբայական ձևեր ևն: Բայց դա արվել ու արվում է խիստ անկանոն ու անհամակարգ: Բազմաթիվ օրինակներից բերենք ընդամենը մեկ-երկուսը. Էդ. Աղայանը, օրինակ, իր բառարանում որպես **լինել** անկանոն բայի քերականական հատկանիշ նշում է դիմավոր և անդամ 13 ձև, բայց **թողնել**, **առնել**, **ուտել** անկանոն բայերի վերաբերյալ բացի սեռից ուրիշ որևէ նշում չի անում², Հ. Բարսեղյանը տալիս է **հողմաբան** բառի հոգնակին (-ներ), բայց իր իսկ կողմից բառարանում գետեղված նույն կազմությամբ *հողմաչափ*, *հողաչափ*, *հողմավար*, *հողմատար* բառերի հոգնակին չի նշում³: Աշոտ և Քնարիկ Սուքիասյանները տալիս են **տալ** բայի սեռական-տրականի զուգահեռ ձևերը (տալի//տալոջ), բայց չեն տալիս **տեզր** բառի սեռական-տրականի կազմությունները⁴: Եվ այսպես շարունակ: Հասկանալի է. բառի քերականական նկարագրություն տալը նրանց խնդիրը չի եղել, բայց կարող էին պահպանել զոնե միօրինակ նկարագրության սկզբունքները:

Առաջին: Բառարանը արձանագրելու է գրական **լեզվի տեղաշարժերը**. նշվելու են թեքվող բոլոր այն ձևերը, որոնք գործող զուգաձևեր են: Ավելին, բառարանը ունենալու է նորմավորող նշանակություն՝ մատնանշելով լեզվի զարգացման հնարավոր ուղիները: Այս իմաստով՝

² Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

³ Տե՛ս Հ. Բարսեղյան, Հայերենի ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Եր., 1973:

⁴ Տե՛ս Ա. Սուքիասյան, Ք. Սուքիասյան, Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Եր., 2002:

բառարանը մի զգալի չափով ստանձնելու է գրական հայերենի քերականությունը նորմավորողի պատասխանատու դերը: Նշված հանգամանքը մեր օրերում դառնում է երիցս կարևոր, քանի որ մենք վկան ու ժամանակակիցն ենք մի իրականության, որտեղ ըստ էության գործնականում պաշտոնապես ոչինչ չի արվում ժամանակակից գրական հայերենի քերականությունը կանոնարկելու համար:

Լեզվի քերականությունը **անընդհատ զարգացող համակարգ** է: Փոխվում են քերականական իմաստները, փոխվում են մանավանդ քերականական ձևերն ու կառույցները: Վերջին բացատրական և ուղղախոսական բառարանների ստեղծումից հետո անցել է շուրջ կես դար: Այդ բառարաններում ամփոփված քերականական ցուցումները, որոնք իհարկե համապատասխանեցված են իրենց ժամանակի գրական լեզվի գործող կանոններին, այսօր երբեմն չեն համապատասխանում մեր գրական լեզվի զարգացումներին: Տեղաշարժեր են կատարվել գոյականի հոլովումների, հոգնակիակազմության մեջ, փոփոխություններ են արձանագրվում բայի խոնարհման հարացույցում, ակնհայտ տեղաշարժեր կան քերականական զուգաձևությունների նախընտրություններում նև:

Բերեմ ընդամենը մեկ-երկու օրինակ. Հ. Բարսեղյանի ուղղախոսական բառարանում բերվում են մի շարք գոյականների հոլովական ձևեր (կարևոր չէ՝ զուգաձևություն, թե՛ միակ ձև), որոնք այսօր միանգամայն անգործածական են, ինչպես **կատարածվի, ավարաովի, ամառնամտի**⁵: Էդ. Աղայանը նշում է հոլովման ու խոնարհման հարացույցների և հոգնակիի կազմության՝ վաղուց գործածությունից դուրս եկած ձևեր՝ **լինել** բայի հրմ. **մի լինիր, դառնալ** բայի հրմ. **մի դառնա, տագր** բառի՝ **տագեր, տագրոջ, տագերոջ, դուստր-ի՝ դուստրներ**: Անգործածական **կենալ** բայի համար մատնանշում է իբրև թե գործածական 9 դիմավոր և անդեմ ձևեր՝ **կենող, կեցող, կեցա, կացա, կաց** նև: Քերականական առավել կամ պակաս տեղեկություններ են տրվում բառերի վերաբերյալ, որոնք վաղուց արդեն դուրս են մղվել գրական լեզվից կամ փոփոխություններ են կրել ելաձևերում, ինչպես **բանալ, գիտենալ, բառնալ, զարկել, թաքչել, ցանկալ, փակչել, մատչել** նև⁶:

Մեր նորմատիվ քերականության գրքերում արտառոց արձանագրումներ կան քերականական իբրև թե գործող ձևերի վերաբերյալ: Օրինակ՝ հոլովաձևերում՝ **աներ** բառի **անոր** սեռական-տրականը, **սկեսուր-ի՝ սկեսոր, կեսոր, զատիկ-ի՝ զատկվա, թաքուստ-ի՝ թաքսության, աշունք-ի՝ աշունքվա, գարունք-ի՝ գարունքվա**⁷: Բայական համակարգում սկզբնաձևեր են նշվում՝ **հրաժարել, նմանել, մոլորել, թանալ (թացել), բսնել**⁸,

⁵ Տե՛ս Հ. Բարսեղյան, նշվ. աշխ.:

⁶ Տե՛ս Էդ. Աղայան, նշվ. աշխ.:

⁷ Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 1983, էջ 78-81:

⁸ Տե՛ս Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզվի քերականություն, Եր., 2004, էջ 364:

խոնարհումներ և դերբայական ձևեր՝ *մի՛ ներս գա, մի՛ տանիր, մի՛ լաք, կեցող, կեցա՞ր*; *անել-արող, տանել-տարող*⁹: Պատկերը ավելի պարզ ներկայացնելու համար ավելորդ չենք համարում բերել վիճակագրական տվյալ միայն վերջին բառաձևի գործածականության վերաբերյալ: ըստ ԱՐԵՎԱԿ-ի (Արևելահայերենի ազգային կորպուս) տվյալների՝ բնագրային օրինակներում **տանել** բայի **տանող** բառաձևը գործածվել է 4.441 համատեքստում, իսկ **տարող**-ը՝ ընդամենը 2¹¹:

Այս և նման լեզվական փաստերը պետք է վերանայվեն ու մշակվեն:

Երկրորդ: Քերականական բառարանի համար չափազանց բարդ ու դժվարին խնդիր է այսպես կոչված **պոստենցիալ քերականական ձևերի** արձանագրումի հարցը: Լեզվում կան ձևեր, որոնք գործնականում գրեթե չեն հանդիպում կամ հանդիպում են խիստ հազվադեպ, սակայն անհրաժեշտության դեպքում կարող են ձևավորվել համապատասխան լեզվի քերականական օրինաչափություններին: Այս կարգի դրսևորումների, այսպես կոչված լեզվի սիմուլյումը հաճախ տարակարծությունների առիթ է տվել հայ քերականագիտության մեջ, ուստի փոքր-ինչ հանգամանորեն անդրադառնանք դրանցից մի քանիսին: Այսպես:

Հայերենի քերականության մեջ ավանդաբար նշվել է, որ՝

ա. բացի անձանիշ գոյականներից, ներգոյական հոլովաձև չունեն նաև՝

• վերացական գոյականները՝ **սարսափ, մտահոգություն, ափսոսանք, քեն, վախ,**

• ժամանակ ցույց տվող որոշ բառեր՝ տարվա եղանակների, շաբաթվա օրերի, ամիսների և այլնի անվանումներ՝ **գարուն, ձմեռ, երկուշաբթի, հունիս, առավոտ, ցերեկ,**

• - **ան** հոլովման պատկանող գոյականների մեծ մասը՝ **գարգացում, հանդիպում, լեռ, դուռ, ձուկ, մուկ,**

• իբրև թե պարունակության իմաստ չունեցող մի շարք գոյականներ՝ **գարի, սեղան, ակնոց,**

բ. հարաբերական համարվող ածականները համեմատության աստիճաններ կազմել չեն կարող,

գ. կան գոյականների խմբեր, որոնք իբրև թե չունեն կամ չեն կարող կազմել հոգնակի թիվ, ինչպես՝

• **-ություն** ածանցով մի շարք գոյականներ, որոնք ունեն հավաքականության իմաստ՝ *ուսանողություն, հոգևորականություն, ազնվականություն* ևն, կամ անվանում են հատկանիշ՝ *հավատարմություն, վստահություն, խրոխտություն, չափավորություն, սրտացավություն* ևն,

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 474, 481-486: **Ֆ. Խղաթյան**, Ժամանակակից հայոց լեզու. մաս Բ, Եր., 2010, էջ 191-198:

¹⁰ Տե՛ս **Մ. Ասատրյան**, նշվ. աշխ., էջ 347:

¹¹ **ԱՐԵՎԱԿ**-ը բաց էլեկտրոնային գրադարան է, արևելահայերեն տեքստերի «դիախորնիկ կորպուս», որը ներառում է գրավոր և բանավոր նյութեր՝ մոտ 110 մլն բառամբերքով:

• **-եղեն** ածանցներով գոյականները՝ *ամանեղեն, կանաչեղեն, ոսկեղեն, մորթեղեն, կաթնեղեն* են,

• հասարակագիտական ուղղություն, գիտաճյուղ, հասարակարգի ենթի ընդհանուր անվանում հանդիսացող գոյականներ՝ *լեզվաբանություն, իրավագիտություն, քարտեզագիտություն, ռեալիզմ, կապիտալիզմ* են,

• ներքին զգացում արտահայտող մի շարք վերացական գոյականներ և առհասարակ այնպիսի երևույթների անուններ, որոնք չեն կարող թվարկվել, ինչպես՝ *գույթ, խանդ, ասիտուսանք, զայրույթ, հավատ, ոխ, խիղճ, վախ, քեն, վազք, ուսում, սով* են:

Նշված բառաձևերը բացառելը և դրանց գործածականության վերաբերյալ արգելքներ սահմանելը առնվազն գիտական չեն: Արդի գրական արևելահայերենի գործող կանոններով՝ այդ բառաձևերի գոյությունը միանգամայն օրինաչափական է: Այլ հարց է, որ դրանց կազմությունը կամ գործածությունը սովորական չէ կամ, ավելի ճիշտ, սպասված չէ: Սովորական չեն, օրինակ, *ասիտուսանքում, վազքում, կաթնեղեններ, հունիսում, դոնում, երկուշաբթիում, այթոռում, առավոտներ, վստահություններ, ամենաուսանողական* ձևերը: Բայց այդ անսովորությունը կամ չսպասվածությունը պայմանավորված է ոչ թե բառաձևի քերականական հատկանիշներով, այլ սկզբնաձև բառի բառային-բառական նրբիմաստներով: Վերացական իմաստ ունենալը, պարունակության իմաստ չունենալը, գիտական ուղղություն ցույց տալը, հավաքականությունը ևն քերականական «կատեգորիաներ» չեն: Այս երևույթը չունի, այսպես կոչված, քերականական պատճառաբանվածություն: Հետևապես քերականական բառարանում այդ բառաձևերը սկզբունքորեն չեն կարող համարվել մերժելի: Բացի այդ, հաղորդակցական տեսակետից շատ կարևոր է նաև մեկ այլ հանգամանք. մերժելով այդ ձևերը՝ մենք լեզուն զրկում ենք ճկունությունից, հնարավորություն չենք տալիս նրան դրսևորվելու իր ողջ հարստությամբ ու բազմազանությամբ: Լեզուն հաճախ կենդանանում և իր ազդեցությունը գորացնում է հենց այդպիսի յուրահատուկ գործածություններով:

Քերականական որևէ կանոն չի խանգարում գործածելու, օրինակ, այսպիսի կազմություններ. «Սա *ամենահայկական, ամենագիտական, ամենալեզվաբանական* միջավայրն է, որտեղ կարող են քննարկվել մեզ հետաքրքրող հարցերը», «*Վստահություններդ* կորցրել էք», «Քո էդ *սրտացավությունները* դիր մի կողմ», «*Խեցեղեններն ու ոսկեղենները* առանձնացրեք իրարից», «Տարբեր են հայկական և ֆրանսիական *ռոմանտիզմները*», «*Առավոտները* անպայման մի բաժակ սուրճ եմ վայելում», «Բրիտանական և ամերիկյան *անզլերենները* ունեն որոշակի տարբերություններ»: Վերացական իմաստ ունեցող գոյականի հոգնակի թվի կիրառությամբ Չարենցի տողը դառնում է խորիմաստ ու ազդեցիկ. «*Կառոտներին* ծովի կղզիներում անցած. Դու իմ կղզին եղար միակ ոսկե»: Կամ՝ օր. **խիղճ** բառի՝ առաջին հայացքից առնվազն տարօրինակ թվա-

ցող հոգնակին՝ **խիդճեր**, ժողովրդական անեծքում շատ տպավորիչ գործածություն է՝ հոգնակի ստացականությամբ՝ «*Խիդճներդ մեռնի*»: Եվ վերջապես, այդ ձևերը կարող են գործածվել պարզապես տերմինային նշանակությամբ, օր.՝ **վախեր** ձևի գործածությունը մանկավարժական հոգեբանության մեջ՝ «**Տարիքային վախեր**. պայմանավորված են անհատի տարիքային հոգեբանական առանձնահատկություններով»¹²: Այս տեսակետից կարելի է ասել, որ լեզվի օրինաչափություններով ձևավորված կազմությունների վերաբերյալ բառարանում սկզբունքորեն չեն կարող սահմանվել, այսպես կոչված, քերականական արգելանքներ:

Երրորդ: Նմանատիպ բառարաններում բառաձևին հատուկ **ընդհանրական հատկանիշները**, օրինակ՝ գոյականի հոլովական հարացույցը, հոգնակի թվի հոլովումը, անորոշ դերբայի հոլովական ձևերը, բայի խոնարհման հարացույցը, սովորաբար տրվում են **տիպար օրինակներով**՝ բառարանի ներածական մասում: Այդտեղ բացատրվում են խորհրդանիշներն ու պայմանական նշանները: Ծավալուն տպագիր բառարանների դեպքում դա միակ ընդունելի տարբերակն է:



Ներկայացնենք մի քանի պատկեր ռուսերենի ամենահայտնի քերականական բառարանից (որի ներածական մասում տասնյակ էջերով բացատրվում են գործածված «սիմվոլներն» ու բառարանից օգտվելու կանոնները (140-ից ավելի էջեր))¹³ (տե՛ս պատկեր 1, 2):


Այս դեպքում դժվարությունն այն է, որ օգտատերը ստիպված պիտի լինի յուրացնելու տասնյակ պայմանական նշաններ: Իսկ դա բառարանը գործնականում դարձնում է դժվարօգտագործելի: Բայց բառարանի այս տեսակը ունի մի շատ կարևոր առավելություն. հոլովման ու խոնարհման տիպար հարացույցների շնորհիվ ընթերցողը հնարավորություն է ունենում համակարգված պատկերացում կազմելու բառախմբերի ընդհանուր քերականական հատկանիշների մասին, հասկանալու, օրինակ, թե ինչ ընդհանուր գծեր ունեն գոյական համարվող բառերը, կամ ինչպիսին է, օրինակ, այս կամ այն լծորդության բայերի խոնարհման տիպական հարացույցը: Դա ոչ միայն սովորական ընթերցողին վարժեցնում է իր մայրենի լեզվի քերականությանը, այլև մասնագետին մատուցում է գիտականորեն բավարար չափով մշակված ու համակարգված փաստական նյութ: Դա էապես բարձրացնում է բառարանի գիտական արժեքը:

Չորրորդ: Մեկ այլ մոտեցմամբ՝ յուրաքանչյուր թեքվող բառային միավորի ամբողջ հարացույցը ներկայացվում է հենց բառահոդվածում (տե՛ս պատկեր 3): Տպագիր գրքային տարբերակի դեպքում, հասկանալի է, դա զբաղեցնում է ահռելի ծավալ՝ հազարավոր էջեր: Մինչդեռ բառարանի էլեկտրոնային տարբերակի համար այս առումով որևէ դժվարություն չի ստեղծվում:

¹² https://hy.wikipedia.org/wiki/%D5%8F%D5%A1%D6%80%D5%AB%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%BE%D5%A1%D5%AD%D5%A5%D6%80

¹³ Տե՛ս **Зализняк А.** Грамматический словарь русского языка. М., 2004:





Կիրառական տեսակետից շատ ավելի արդյունավետ է այս երկրորդ տարբերակը, եթե բառարանի տեսակը տալիս է այդ հնարավորությունը: Մեր բառարանի ուսումնական տեսակը տալիս է այդ հնարավորությունը:

Հինգերորդ: Ուսումնական հորջորջումը բնավ չի նշանակում, թե դրանում նյութի մատուցումը խորությամբ զիջում է ոչ ուսումնական բառարաններին կամ ունի պակաս գիտականություն: Պարզապես ընդգրկում է սահմանափակ ծավալով, բայց միևնույն ժամանակ՝ առավել գործածական բառապաշար, մեր բառարանի պարագային՝ մոտ 4000-ից ավելի բառ կամ բառային միավոր: Դա իր հերթին ենթադրում է նյութի մատուցման որոշ յուրահատկություններ, որոնցից մեկն էլ, օրինակ, բառաձևի նկարագրության՝ վերը նշված երկրորդ տարբերակի նախընտրություն է, այսինքն՝ բառարանում կարելի է ներկայացնել թեքվող բոլոր միավորների հարացույցները: Բայց դա այնքան էլ նպատակահարմար չէ, քանի որ անհարկի ընդլայնվելու է բառարանի ծավալը. բազմաթիվ էջեր լցվելու են օգտաստիքոջը շատ ծանոթ զանազան հարացույցներով: Հետևաբար նախընտրելի է միջին տարբերակը. տիպար օրինակներով ներկայացվում է միայն խոնարհման հարացույցը՝ ըստ բայակազմական կադապարների: Մյուս ընդհանրական հատկանիշները (գոյականի հոլովումը, ածականի համեմատության աստիճանները են) տրվում են բառահոդվածում:

Վեցերորդ: Բառարանը պետք է ունենա առանձին հավելված՝ նվիրված **հատուկ անուններին**: Հայերենում մի շարք տեղանունների և անձնանունների հոլովաձևերի կազմությունը ունի որոշակի դժվարություններ: Ավելին՝ գործածական հաճախականությամբ պայմանավորված՝ այդ անունների ձևակազմության սկզբունքները հաճախ են ենթարկվում փոփոխությունների: Բերենք ընդամենը մեկ օրինակ. **Գյումրի** և **Լոռի** հատուկ անունների վերաբերյալ տերմինաբանական կոմիտեի հայտնի որոշումը գրական լեզվում գործածական միակ տարբերակ սահմանեց դրանց **-ու** հոլովմամբ ձևերը՝ **Գյումրու, -ուց, -ով, -ում**; **Լոռու, -ուց, -ով, -ում**: Մինչդեռ պարզ վիճակագրությունը և կենդանի լեզվագործածության օրինակները վկայում են, որ բացի **Լոռու** և **Լոռուց** ձևերից, առավել գործածական են այդ երկու անվանումների **-ի**-ով մյուս կազմությունները՝ **Գյումրի, -ի, -ից, -ով, -ում**; **Լոռի-ով, Լոռի-ում**: Նորմավորման կարիք ունեն այս և բազմաթիվ հայերեն ու օտար այլ հատուկ անունների հոլովական ձևերը՝ *Արգիշտի, Ագապի, Ադասի, Պազանինի, Դա Վինչի, Նավալնի, Զելենսկի, Անի, Մեծ Պարնի, Էրեբունի, Բջնի, Փարպի, Չանահյչի, Նազասակի*: Նորաստեղծ բառարանը մեծապես կնպաստի այդ գործին:

Յոթերորդ: Քերականական բառարաններում ընդունված է **անկանոնությունները** (հոգնակիի անկանոն կազմություն, անկանոն հոլովումներ, դերանվանական հոլովում, խոնարհման անկանոն ձևեր են) տալ բառահոդվածում: Նոր կազմվող բառարանը, բնականաբար, պահպանելու է այս սկզբունքը, որովհետև օգտատերը միայն այդ կերպ կարող է ծանոթանալ անկանոնության դրսևորումներին:

Ութերորդ: Բառարանը ունի **ոճաբանական արժեք**, քանի որ բառաձևերի դիմաց ըստ անհրաժեշտության կատարվում են ոճական նշումներ՝ *հնացած, խոսակցական, բարբառային, գրքային, անհանձնարարելի* են:

Իններորդ: **Խոսքիմասային տարարժեքությունը** ներկայացվում է միևնույն բառահոդվածում՝ առանձին համարակալումով և օրինակներով, որոնք ըստ անհրաժեշտության տրվում են բառակապակցությամբ կամ նախադասություններով (տե՛ս վերը):

Օրինակները հիմնականում ինքնաստեղծ են՝ քաղված կենդանի խոսքից: Երբեմն վերցված են հեղինակային խոսքից՝ անփոփոխ կամ մասնակի փոփոխությամբ. հեղինակի անունը չի նշվում:

Տասներորդ: Բառարանում **չեն տրվելու՝**

- **Գոյականի իմաստային-քերականական խմբերը**՝ անձնանիշ/ոչ անձնանիշ, վերացական/թանձրացական, շնչավոր/անշունչ, քանի որ այս տարբերակումները հայերենում ձևաբանական սկզբունքային արտահայտություն չունեն:

- **Որոշիչ հոդը**, քանի որ այս դեպքում կանոնը հստակ է և անփոփոխ. արդի հայերենում ձայնավորով վերջացող բառերը միշտ ստանում

են **-ն**, բաղաձայնով վերջացողները՝ **-ը/-ն**: Դրանք տրվում են առանձին այն դեպքերում, երբ առկա է քերականական մասնիկի գործածության տարբերություն, ինչպես՝ **ՄԱՐԶ**, եզ. առում՝ **ը/ն**, հոգն. առում՝ **-/-**:

- **Հնացած և գործածությունից դուրս եկած կազմությունները**, օրինակ՝ արգելական հրամայականի անորոշի հիմքով ձևերը (*սի՛ կար-նար, սի՛ մոտենար, սի՛ գաք* են):

- **Հարադրությունները**, այդ թվում՝ **տալ** բայի հարադրությամբ կազմությունները, քանի որ դրանք բնութագրվում են թեքվող բաղադրիչ(ներ)ի քերականական փոփոխություններով՝ **ասել-խոսել - ասացի-խոսեցի, բերել տալ-բերել տվեցի, տուն-թանգարան-տուն թանգարանի** են:

Բառարանի ստեղծումը՝ որպես իր տեսակի մեջ առաջին օրինակ, կարևոր ներդրում կլինի հայ բառարանագրության մեջ:

Ուսումնական քերականական այս բառարանը հիմք կարող է դառնալ արդի հայերենի ամբողջական և ընդհանուր քերականական բառարանի կառուցման:

ЮРИЙ АВETИСЯН – Грамматический словарь: вопросы оформления и структуры. – В статье кратко описаны основные компоненты оформления и структуры «Современного армянского учебного грамматического словаря». В словаре будет представлено полное грамматическое описание около 4000 слов. Он будет представлен пользователям в двух форматах: печатном и электронном.

Словарь имеет морфологический и словообразовательный характер; будет так же представлено морфологическое описание единицы слова современного восточноармянского языка. Синтаксические особенности слова будут приведены лишь в той мере, в какой они связаны со словообразованием. Словарь будет иметь нормативное значение, указывая возможные пути развития языка. В словаре также будут представлены вариации частей речи, типичные примеры падежа и спряжения глагольных единиц, стилистическое значение слов.

Ключевые слова: *грамматический словарь, электронный, морфологический, полный, учебный, описание, смещения, потенциальные формы, типичный пример, нормализация, вариации*

YURI AVETISYAN – Grammar Dictionary: Designing and Structuring Issues. – The article briefly describes the main components of the design and structure of the “Modern Armenian Educational Grammar Dictionary”. A complete grammatical description of about 4000 words will be illustrated in the dictionary. It should be presented to users in two formats: printed and electronic.

The dictionary has a morphological-structural character; it will present the morphological description of the word unit of Modern Eastern Armenian. The syntactic features of the word form will be given only to the extent that they are related to the word formation. The dictionary will have a normative significance, indicating the possible ways of language development. The dictionary will also present part-of-speech variations, typical examples of the case and conjugation patterns of verbal units, and the stylistic value of words.

Key words: *grammar dictionary, electronic, morphological, complete, educational, description, displacements, potential forms, typical example, normalization, variation*